

ԿԻՕՆԱԿԱՆԻՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Հարունակութիւն. տես թիւ 8.)

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԿԸՅՅՆԷՆ՝ Հրէից իրենց անհաւաստութեան համար արհամարհելիք, և եկեղեցւոց հասարակ նոռն համար ընտրութիւն:

Կը վախնամ, Տէր իմ, որ երբ մէք մեր մէջ զմեզ Յակոբայ և Իսրայելի որդիքն եմք կ'ըսեմք, Աստուծոյ բերնով Աստուծոյ բաժնի կասարուած ըլլայ. գրուի ԿԵ. «Սպաննէ զքեզ Աստուած, ո՛վ Իսրայել, և օտար անունով կանչէ» (1): Կը դողամ չըլլայ որ մէք ալ այն ծառաներէն ըլլամք, ինչպէս բնայ Սոփսէս ԻՂ գլխոյն մէջ. «Հեթանոսներն գլուխ ըլլան, և անհաւատ ժողովուրդն աղգին մէջ» (2): Ինչպէս որ մէք հիմայ այնպէս (անհաւատ) եմք հաղար տարիէն աւելի է: Անոնց համար ըսաց Ասայի մարգարէն եւս ժԱ գլխոյն մէջ. «Իցուի երկիրն Աստուծոյ հաւատարմին, և յորդէ ծախու ջրին պէս» (3): Անոնց համար ըսաց Սողոմոն եւս Գ թագ. Ը գլխոյն մէջ. «Տէր Աստուած, երբ այլազգին գայ քո օրհնեալ սուրբ տունը, մտնի ընդ անոր՝ տէր Աստուած իմ, որպէս զի բոլոր երկիրն վախնայ քու անունէդ Իսրայելի ժողովուրդին պէս» (4):

(1) Եւ զմեզ Տէր անտակեցէ. և ծառայցն իմաց կոչեցցի անուն նոր: Եւ. ԿԵ. 15:
(2) Այն մտի խօսքը հայերէն թարգմանութեան մէջ ըստ կը բացատրուի. «Եկն որ ի քեզ իցէ, երբ քան զքեզ վեր ի վեր, և դու իջցես ի վայր ի վայր: Նա ապէք քեզ փոխ, և դու ոչ ապցես նմա փոխ. նա եզկցի դուրս, և դու եզկցես վերջ» Ի. Օրհն. ԻԸ. 45:
(3) Զի լցու երկիր ամենայն՝ գիտութեամբ Տեառն իրբեւ զնորս բազումս որ ծածկեն զժողով: Եւ. ժԱ. 9:
(4) Եւ օտարութիւն որ ոչ իցէ ի ժողովուրդէն

Ռեբեմն ինչու կը պարծխմք, Տէր իմ, և ինչու համար հեթանոսներն կ'արհամարհեմք, երբ Սողոմոն մարգարէն զանոնք մեզ Աստուծոյ երկիր զին և սուրբ տան մէջ հաղորդակից ըրաւ, և զմեզ գուցէ իբր անարժան դուրս ձգեց Աստուած այն տրնէն, և անոնց տուաւ նոյն տունը. որոյ համար Սոփսէս եւս ըսաց. «Այսպէս կ'ըսէ տէր Աստուած. լցուի բոլոր երկիր արհաւիր փառքով» (1): Որոյ համար և Վաւիթ ըսաց ԻԱ սաղմոսին մէջ. «Վան ու դառնան դէպ Աստուած երկրի բոլոր ծայրերը, և հաղար աղգերը» (2): Անոնց համար ըսաց Ասայի եւս Կ գլխոյն մէջ. «Ո՛վ Վաւիթ սուրբ տունը. քու լցու գայ, և Աստուծոյ փառքը քո մէջդ ծաղած է, և հեթանոսք քու լուսովդ սրտախն, և թագաւ որք քու արեւելից պայծառութիւնը: Վերջու աչքդ քու բոլորութեք, և տես. սասնը ամենքն ժողովեցան եկան քու վերայ: Այլազգի որդիք քու պաւրսաներդ շինեն, և նոցա իշխանքը քեզ ծառայեն» (3): Աւ որոնք են, Տէր իմ, այն այլազգի որդիքն որ Տէր

քու մէջ Իսրայելի, և նա եկեալ իցէ յերկր հեռաւտան, որ և լսիցէ զանուանէ քու մէջ մեծէ: և զմեռանէ քու մէջ հորէ. և զբաղի քու մէջ ձգելը. և եկեաց յաղթիս կոչցէ ի տեղու յայտնի. և դու լուսիցես յերկիր ի պատարան բնակութեան քու մէջ, և արեւոյն ըստ ամենայնի զոր և կարգապէս առ քեզ օտարութիւն. զն ծանօցեն ամենայն աղգք երկրի զանուն քո, և երկիրն ի քեզ որպէս և ժողովուրդ քո Իսրայել: Գ. թագ. Ը. 41-45:

(1) Եւ լցցեն փառք Տեառն զամենայն երկիր և թագ. ԺԻ. 21:
(2) Յիշեցցեն և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի: Երկիր պազցեն նմա ամենայն առհմք ազանց: ՍՂ. ԻԱ. 28:
(3) Լուսաւորեաց՝ լուսաւորեաց Երուսաղեմ: զն հասեալ է լցու քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցցեն: . . . Համբարձ շուրջ զքեւ զայս քո, և տես ժողովալ առ քեզ զամենայն մանկունս քո. զն եկին հասին ի հեռաւտանէ որդիք քո և դասերք քո ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցցեն: . . . Եւ շինեցցեն որդիք այլազգեաց զպարտալ քո, և թագաւորք նոցա ընծայեցցեն քեզ: Եւ. Կ. 1. 6. 10:

բոլոր տունն եկան, եթէ ոչ հեթանոսներն որ կուց ծառայեցին և Աստուծոյ օտարացան: Ասոր համար ըսաց թէ սուրբ տանը ըւտով պտրտին: Եւ մեք եմք այն արեւն մերժուողներն, և խաւարի մէջ մնացողներն, ինչպէս որ մնացած եմք մինչեւ ցայսօր հազար տարիէն ի վեր: Գարձեալ նոյն մարգարէն ըսաց անոնց համար ՚Ահ գլխոյն մէջ. « Ազգն զոր չճանչեցիր՝ պիտի կանչես, և հեթանոսներն՝ որոնք զքեզ չտեսան, քեզ գան » (1): Ինչպէս և գործով կր տեսնեմք այս բանս այսօր հազար տարիէն աւելի է. որովհետեւ մեզ տրուած օրինաց համեմատ խըրհուած Քրիստոսն եկաւ, և օրէնք չճանչող հեթանոսներն եկան անոր, և նա նոր օրէնքներ սուսաւ անոնց՝ մարբ և սուրբ: Եւ իտէ գլխոյն մէջ կ'ըսէ. « Խորանեցան և նոցա թաղաւորներն Աստուծոյ հաւատովն ժողովեցան » (2):

Եւ կը վախեմ, Տէր իմ, որ նոյն գլխոյն մէջ ըսուածն անոնց համար է. « Ժողովեցէք ամենքդ ալ, և եկէք հեթանոսներ՝ որ Աստուծոյ ձեռօքն ազատեցաք, հեթանոսներէն և ժողովորդէն » (3): Եւ Լսոյն ՚Ահ գլխոյն մէջ ըսաց. « Ինդրեցին զիս անոնք որ առաջուց զիս չէին հարցաներ, ու գրտան զիս անոնք որ չէին խնդրեր » (4):

Անոնց համար կ'ըսէ և Լըրեմիա Գ. գլխոյն մէջ. « Ժողովուրն ամենքն ալ նր տանը մէջ Տիրոջ անուամբը, և իրենց սրտին չարութիւն չերթան » (1): Գարձեալ նոյն մարգարէն անոնց համար ըսաց Ժ. Զ. գլխոյն մէջ. « Լըրեմիա ծոյրերէն քեզ գան ամեն հեթանոսներն ու բուն՝ մեր հայրերը չճանանքեցին եթէ ոչ ստութիւն անօրէնութիւն » (2): Կարձեալ նա անոնց համար ըսած է Գ. գլխոյն մէջ. « Հեթանոսաց արուեստքաւ որ միտին Տիրոջ անուան վրայ խօսին, և մէկ լծի տակ անոր ծառայեն աւան մարդ իւր տեղէն, և հեթանոսաց բոլոր կողմները » (3): Անոնց համար ըսած է Օսարարիա եւս Բ. գլխոյն մէջ. « Օսարարացիք Կիսն տուն, վասն զի ես պիտի գամ քեզ և բու մէջդ քնակիմ այն օրն, և հեթանոսք իրենց բազմութեամբն Աստուծոյ պիտի մօտենան » (4): Այն մարգարէն դարձեալ Ը գլխոյն մէջ կ'ըսէ. « Այսպէս կ'ըսէ զօրաց Տէրն, պիտի գան շատ հեթանոսներ շատ տեղերէ, և պիտի բռնն իւրաքանչիւր իւր ընկերին, երթանք խնդրեմք Տէր Աստուծոյ բարութեամբ » (5):

Այս ըսածներս, Տէր իմ, հիմայ

(1) Եւ ժողովեցին ամենայն ազգք յանուն Տեառն յերուսաղեմ. և ոչ եւս զանոցն զհեախորհրդոց սրտից իւրեանց չարաց: Երժ. Գ. 17:

(2) Առ քեզ հեթանոսք եկեցին ի ծագաց Երկրէ և տեսցին. որպէս առա գործէին հարն մեր կուսս. և ոչ զոք օգուտ ի նոցան: Երժ. Ժ. 2. 19:

(3) Չի յայնմամբ դարձուցին ի վերայ ժողովոցոց լեզու յազգս նոցա, ի կարգու ամենեցուն զանուն Տեառն, ի ծառայել նոցա նմա ընդ միով յուսում: Սոմ. Գ. 9:

(4) Ինչա և ուրախ լըր դուտար Կիսնի. զի անա ես եկից և բնակեցալ ի միջի յում՝ ասէ Տէր. և այգաւ ինեցին ազգք բազումք ի Տէր յառաք յայնմիկ. և եղեցին նմա ժողովուրդ, և բնակեցին ի միջի յում. և ճանչցան թէ Տէր ամենակալ առարկաց զիս առ քեզ: Չս. Բ. 10. 11:

(5) Այսպէս ասէ Տէր ամենակալ. դարձեալ եկեցին ժողովուրդք բազումք, և բնակէք բազալաց բազմոց: Եւ ժողովեցին բնակէք միայ ի միւս

(1) Ազգք որ ոչ գիտցին: կարգացն առ քեզ. և ժողովուրդք որ զքեզ ոչ ճանչեցին այդատան աբացն զքեզ. վասն Տեառն Աստուծոյ զս սրբոյն խորացելի զի վառաւոր արար զքեզ: Ես. Ծ. 1. 5: — Ասացի՛ աւտիկ եմ, ցազգն ցայն որ զմտուն իմ ոչ կարգացին: Ահ. Կե. 1:

(2) Թագաւորք տեղեկն զիս և յան կայցն. իշխանք և երկիր պապցն նմա վասն Տեառն. զի հաւատարիմ է սուրբն խորացելի և որ բնորեաց լողքից: Ես. Խ. 7:

(3) Ժողովեցարուք և եկայք իորհեցարուք ի միտին ապրեալք ի հեթանոսաց: Ես. Խ. 20:

(4) Գայանի եղէ այնոցիկ որ զինն ոչ հարցանեցին, գտայ այնոցիկ որ զիսն ոչ խնդրէին: Ես. Կե. 1:

լրացած են, և կը լրանան մեր սչաց
առջև: Ար տեսնես հեթանոսներն և
օտար լեզու խօսողներն ինչպէս իրենց
կուսքերն թողոցին, և օրինաց և բու-
լը մարգարէից պիբերն և սաղմաս-
րանն կը կարդան, և անոնցմէ և ոչ մին
ուչ Ստիւտի, ոչ Մհարանի և ոչ ուրիշ
մեր մարգարէից մէկուն ձեռօքն հա-
ւատաց, և ոչ այն ժամանակ հաւա-
տացած կուսքերէն մին մնաց, քանի
որ այն արդարոյն հաւատացին, որոյ
համար կըլտէ Մքրակում Գ. գլխոյն
մէջ. «Ելար քու ժողովրդիդ փրկու-
թեան քու օձերդ հետ միատեղ փր-
կելու» (1):

Գ.Լ.ՈՒԻՍ Ժ.Ե.

Հիւսիսային Կիւրախ-Պարթիւն և Հրէից վեր-
նալը, ինչպէս հեթանոսայ գլխոյն մէջ պիտի
պիտիմք:

Ար վախնամ, Տէր իմ, որ յազթող
ու փառաւոր Աստուած հեթանոսներ-
ը կը կենդանաւորմէ հաւատոյ ձե-
ռօք, և զմեզ մեր անհաւատութեան
մէջ կը սպաննէ, ինչպէս ինքն ուսուց
Ասայի մարգարէին բերանովն ԿԵ ՎԵԼ
խայն մէջ, թէ «Ասանցի և զանցիք.
սցայէս կըլտէ աէր Աստուած, ահա
իմ ծառաներս պիտի ուտեն՝ և դուք
պիտի անօթենայք, ահա իմ ծառաներս
պիտի խմեն՝ և դուք պիտի ծարուիրք,
ահա իմ ծառաներս պիտի ուրախա-
նան սրտի ուրախութեամբ, և դուք
պիտի ամօթոպարտ լինիք սրտի դառ-
նութենէ, և զբեզ պիտի սպաննէ
Աստուած, ո՛վ Իսրայէլ, և պիտի կան-
չէ իւր ծառայն ուրիշ անուամբ, ոչ
լով օրհնեց զաննք օրհնեալն երկրի վե-

րոյ. ամէն» (1): Եւ կը տեսնեմք որ
այն անուան բնդ ունողներն օրհնեալ
են երկրիս վերայ, և զմեզ աշխարհիս
չորս կողմը ցրուեց, և այսօր հազար
տարի է որ գերի եմք, և յայտնի կ'ե-
րեւին մեր վերայ աստուածային բար-
կութեան նշանները, ոչ զմեզ խրատե-
լու՝ այլ եղծելու համար: Եւ այս է
վերջընէն ու աւերել՝ որով Աստուած
վախ տուաւ Իսրայէլը պիտի սպաննեմ
բերով, և այն կենդանի հեթանոսներն
զոր իւրեան ծառայ կ'անուանէ, պի-
տի բնդունին Աստուծոյ հաւնած և
ուզած անունը, այլ չէ թէ մեր առ-
ջի անուան եղծուելէն առաջ, ինչպէս
կ'երեւի Ասայեայ ձեռօք Աստուծոյ ը-
սած խօսքին կարգէն և հետեւութե-
նէն: Վսոյն ու ծարաւն ալ զոր կը
քաշեմք, հացի և ջրոյ չէ, այլ սրտից
և հոգւոյ ամլութեան, և Աստուծոյ
խօսքին սովը, ինչպէս որ մարգարէք կը
քարոզէն Մովսայ բերանովն գլուխը:
Եւ դու, Տէր իմ, քան զիս աւելի
լու գիտես այս բանս, սակայն Աստու-
ծոյ եմք ամեն բանի մէջ որ մեզ պա-
տահին:

Գ.Լ.ՈՒԻՍ Ժ.Ը.

Թէ ի՞նչ կերպով հիւսիսային Կիւրախ-Պարթի-
ւնը հաւարոյ միջոցաւ մարտ-թեամբ և զգու-
շութեամբ նոր օրէնքն ի՞նչ պահէն:

Ար վախնամ, Տէր իմ, թէ հեթա-
նոսներն հազար տարիէն ի վեր մինչև

(1) Զի կոչցի զմեզ և ոչ լուարուք, խօսե-
ցայ և ստուգանցեք, և արարեք չար առաջի իմ,
և զոր ոչ կամի ընտրեցեք: Վասն այսօրիկ այսպէս
ասէ Տէր, ահաւասիկ որ ծառայեն ինձ կերպեն,
և դուք քողցիջիք, ահաւասիկ որ ծառայեն ինձ
սրբցեն, և դուք ծարուեսիրք, ահաւասիկ որ ծա-
ռայեն ինձ ուրախ լիցին, և դուք ամաշտիրք, ահա-
ւասիկ որ ծառայեն ինձ ցնծացեն ուրախութեամբ
սրտից, և դուք սղագակեմիրք առ ցաւս սրտից
ձերոց, և առ բեկուան սգոց ձերոց ոգրաւիրք,
զի թող լիք զանուն ձեր ի յագուրդ ընտրելոց իմոց:

քաղաք, և ասացեն երթիցուք ազաւել վերես
Տեառն, և խնդրել վերես Աստուծոյ ամենակալի
երթաց և ես: Զմ. Բ. 20, 21:
(1) Ելեր ի փրկութիւն ժողովրդեան քո՛ փր-
կել զօձեար քո: Աճ. Գ. 13:

ցայսօր արդարացած են, այն ժամա-
նակէն որ Յիսուս Արուստղէմի մէջ
մեռաւ: Որովհետեւ Աստուծոյ՝ Քրի-
ստոսի՝ և Առաքելաց հաւատարմէն
առաջ և ոչ մէկ բարիք մի ունէին:
Այն հեթանոսները գուցէ այն ձկներն
և գազաններն էին որ առաջնորդ մի
չունէին, որոյ համար կ'ըսէ Ամբա-
կում մարգարէն Ա գլխոյն մէջ: Աոնք
են հաւատոյ միջոցաւ մարբուած հե-
թանոսներն, ունին իրենց պահքն և
նոր օրինաց պահեցողութիւններն, և
ամենքն ալ յորմար են մաքրութեան
ինչպիսի որ Հրէից հին օրէնքը կը պա-
րունակէ: Տես որ ամեն լեզուով և ա-
մեն տեղ յարեւելք և յարեւմուտք
Աստուծոյ անունը կը խոստովանին հե-
թանոսք և անոր կը հաւատան, թէ եւ
ոչ Սոփեսէն և ոչ ուրիշ մարգարէի
մի սորվեցան, և կ'աշխատին կը սորվին
օրէնքներն և ամեն մարգարէից գրու-
եանքը: Եւ Աստուած զանոնք այն
Արդարոյն աշակերտաց ձեռօքն կան-
չեց որ Աստուծոյ հետ զանոնք փրկե-
լու ելաւ, ինչպէս կանխաւ խօսեցաւ
նոյն ինքն օրհնեալ և փառաւոր Աստ-
ուածն Ամբակումաց Գ գլխոյն մէջ (1):
Անոր այն աշակերտներն մեր սրգիքն
էին, Իսրայէլի սրգւոյմէն, որոնք ու-
րիշ անուամբ՝ Առաքելք կը կոչուին:
Շատ կը վախեամ, Տէր իմ, թէ ասոնք
էին այն մարգիկն որոնց համար ըսաց
Աստուած՝ Իսաթի բերանով Սողմոսի
ԺԸ գլխոյն մէջ. «Անոնց ձայնը բոլոր
աշխարհն ելաւ, և վերջին ծայրերը
քննուեցան անոնց խօսքերը» (2): Եւ
մարգարէին ըսածն են յայտնի մեզ կ'ա-

պացուցանեն թէ անոնց համար կը
խօսի և ոչ մեր, որովհետեւ կ'ըսէ.
«Չգտաւ լեզու և խօսք որ անոնց
ձայնը չբուխ» (1): Ասեւ այս ալ մեր
երրօյական լեզուին մէջ չկրնար ըլլալ.
վասն զի որչափ մարդոց աղք որ Սոփ-
եսէսի և Ահարոնի հրամաններուն կը
հնազանդին, անոնք սպաննեցին հե-
թանոսներն, և զանոնք իրենց բովէն
հալածեցին: Այն հեթանոսներն այս-
օրուայ օրս Սոփեսն ու մարգարէներն
և զԱստուած կը ճանչնան, և նոր օ-
րէնքներն կը պահեն, ինչպէս որ առա-
քեալներն ուսուցին: Սակայն Աստու-
ծոյ եմք:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Սարգիսից Եւ Առաքելաց ընդհանրութիւնը:

Կը վախնամ, Տէր իմ, չըլլայ որ
Օտարախա մարգարէին ԺԳ գլխոյն
մէջ ըսածը՝ թէ «Օտարեմ հովիւն և
ոչխարները ջրուին» (2), լրացած ըլ-
լայ այն երիտասարդներուն և առաքե-
լաց հովիւն զարկած ժամանակնս: Այս-
պիսի զի անկէ ի վեր մէք ոչխարքս ցիր ու-
ցան եղանք աշխարհիս երեսն, և այն
մեր սրգիքն՝ այսինքն առաքեալներն ե-
լան մարգարէից տեղ: Եւ այս այն ժա-
մանակէն ի վեր յայտնի եղած է, ու
որովհետեւ անոնցմէ յետոյ ուրիշ մար-
գարէ մի չխրկեց մեզ Աստուած, և
ոչ տեսիլքով բան մի մեզ յայտնեց:

Կը վախնամ, Տէր իմ, մի գուցէ
առաքեալներն եղած ըլլան այն երիտա-
սարդներն՝ որոնց համար ըսաց Աստ-
ուած Յովել մարգարէին բերանով Գ
գլխոյն մէջ. «Չէր բահանաներն ե-
րազներ երազեն, և ձեր երիտասարդ-

և զձեզ Տէր սպասեցեց: Եւ ծառայոյն իմաց կո-
չեցից անուն նոր, որ օրհնեացի ի վերայ երկրի. զի
օրհնեացին զԱստուած Ճշմարիտ: Եւ. ԿԵ. 12-16:

(1) Եւր ի փրկութիւն ժողովրդեան քո: Աճ. Գ. 15:

(2) Եւր ամենայն երկիր եւ բարբառ նոցա,
մինչեւ ի ծագաւ աշխարհի են խօսք նոցա: Մճ. ԺԲ. 4:

(1) Ոչ են բանք և ոչ են խօսք որոց ոչ լին
ձայնք նոցա: Աճ. Գ. 3:

(2) Հարից զհովիւն և ջրուեացին խաչներն,
Չս. ԺԳ. 7:

ներն տեսիլներ տեսնեն» (1) : Յիրաւի, Տէր իմ, քահանայք ըսածը մեր մարդարէններն են որ հեթանոսաց հաւատքն երազեցին, այն հաւատքն որ ըսած երիտասարդներն՝ այսինքն առաքեալները տեսան և ընդունեցին : Եւ նոյն երիտասարդաց համար ըսաց Պաւլոս մարդարէն և Գր սողմասին մէջ. « Եկէք որդեակք և մօտիկ բրէք ինձ, որ Տիրոջ երկիւզն ձեզ սորվեցընեմ» (2) : Եւ Մատուած զաննիք (մարդարէնէ ըր) յագնահանապէս որդիք չանուանէր, այլ Խորայէլ անգրանիկ կը կոչէ եզակահանապէս ըստ հասարակ սովորութեան : Եւ սողմասի մէջ ուրիշ տեղեր ալ որդի կ'անուանէ այն երիտասարդներն, երբ կ'ըսէ ճիշտ գլխոյն մէջ. « Որդիք քո որպէս նորատունն » : Իսկ Խորայէլն համար, Տէր իմ, ըսաց Մատուած Լսացեաց բերանով Ե գլխոյն մէջ. « Լսգի Մատուածոյ սարաւովթ՝ Խորայէլն տունն է, մնացի՛ որ դոյ խաղաղով մէկտեղ, և եկաւ փշերով մէկտեղ, անոր համար ևս պիտի բերեմ այն տունը քակոյն՝ որ ոտից կօխան ըլլայ» (3) : Եւ նախասացեալ Մատուածոյ որդւոց համար՝ որոնք Մաքեալ եւս կոչուեցան, ըսաց Մատուած Լսացեաց բերանով ԻՍԳ գլխոյն մէջ. « Հիմայ քու երեսդ չպիտի կարմրի Յակոբ, և չպիտի կախուի քու դէմքդ, այլ այն ժամանակ՝ երբ տեսնես քու աչաց առջեւ քու զաւկըներուդ մէջ որբուածներ՝ զոր իմ ձեռքերս սակեցնեցին» (4) : Եւ եթէ, Տէր իմ, այն

որդիքը մեր առջեւ որբուած ըլլային մեր օրինաց ճամբով, չէր ըսեր մեզ համար՝ թէ պիտի կարմրիք և մեր երեսը պիտի կախուի, մանաւանդ թէ կը փառաւորուէինք և երեսնիս կը պայծառանայք : Եւ Յակոբայ երեսաց աւմընալն այս աւերութիւնն կը նշանակէ. վասն զի այն որդիքը զոր Մատուած իւր ձեռքն սակեցնեց՝ այսինքն Մաքեալներն, մեր առջեւ որբուեցան, բայց չէ թէ մեր օրինաց համար : Վասն որոյ Մատուած սայ սր իմանալով, թէ մեր օրէնքն՝ անոց օրէնքը չէ :

Իարձեալ կ'ըսէ Մատուած կրեմիտի բերանով ԻԵ գլխոյն մէջ. « Լսն օրն չպիտի ըսեն՝ մեր հայրերն աղտի կերան, և որդւոց տիգաններն առնուեցան» (1) : Վասն զի Հրէից անհաւատութիւնն չիտայեց և ոչ այլ կը վնասէ Մաքեալից հաւատոյն. անոր համար գրուած է. « Կենդանի եմ ես, կ'ըսէ Տէր, թէ այս առակս դուքս պիտի լինի Խորայէլն մէջէն» (2) : Որով հետեւ բնաւ եզամ չէ որ Մաքեալներէն մին (Քրիստոսի) հաւատալէն յետոյ, կրկին դառնայ մեր հաւատոյն. վասն որոյ մեր անհաւատութիւնն չէն զգար անոնք, ինչպէս որ մեր առամունքն առնուեցան մեր հարցը մեզքերէն : Վաւեւ, Տէր իմ, այն որդւոց՝ այսինքն Մաքեալից համար ըսաց Մատուած Լսացեաց մորդարէին բերանով. « Որմէ պիտի դադարեմ, եթէ ոչ իմ ժողովրդէս, և այն

(1) Սոյն վրայութիւնը Յովկեոյ Գ գլխոյն մէջ չկայ, այլ Բ գլխոյն 28 համարին մէջ :
 (2) Երկրք որդեակք իմ և ըսարուք ինձ, և զերկիւզ Տեսան ուսուցից ձեզ : Սալմ. 14. 12 :
 (3) Լսգի Տեսան զգրութեանց՝ տունն Խորայէլն է . . . մնացի զի բերցէ խաղաղ և երկր փուշ . . . քակեցից զցանկ նորա և եղեցի ի կօխանն : Ես. 6. 7. 2. 5 :
 (4) Ոչ այժմ ինչ անուշակե Յակոբ, և ոչ այժմ զերեսս այրագունեաց Խորայէլ, այլ յորժամ տես-

յին որդիք նորա զգործս իմ. վասն իմ սուրբ արտաքն զանուն իմ, և սուրբ արտաքն զուրբն Յակոբայ, և երկիւզն Մատուածոյն Խորայէլն : Ես. 10. 22. 25 :
 (1) Յաւուրսն յայնոսիկ մի եւս ասիցեն թէ հարցն աղտի կերան, և որդւոց առամունքս առին : Երմ. 1. 12. 29 :
 (2) Կենդանի եմ ես՝ ասէ ազգովնայի Տէր, եթէ լինիցի առակդ այդ որ ասի ի մէջ Խորայէլն : Երմ. 1. 5 :

որդւոցմէ՝ որ անհաւատ պիտի լինին, Աստուած ըլլայ անոնց փրկիչ ամեն նեղութեանց մէջ, և նորա երեսը սիրով պահէ զանոնք, և հեղութեամբ փրկէ զանոնք, և օգնական ըլլայ երկար օրերով ։ (1) ։

Խիստ ճշմարիտ է, Տէր խմ, որ այն որդիքն որոնց համար է մեր խօսքը, հաստատուն մնացին միշտ. և այն ժամանակէն ի վեր որ այն արդար թագաւորն և անոնց վարդապետը զերեւիք ազատեց, բնաւ երբէք զանոնք Աստուած ձեռքէ չթողուց ։ Բայց զմեզ թողուց, և անոնց հետ եղաւ միշտ. և այն որդւոց՝ այսինքն Առաքելաց համար ըսաց իմաստունն Յեսու Սիրաքայ որդին Գ գլխոյն մէջ. « Ահանջ դրէք սիրելի որդիք, և բռէք՝ որ ապրիք, վասն զի Աստուած գհայրերն որդւոց վերայ կը պատուէ » (2) ։ Եւ այն պատիւնն որ խօսքով պէտք է մեզ ի մանամբ, ահա նոյնը կը յայտնէ Աստուած Սաղարիա մարգարէի բերանովն Գ գլխոյն մէջ. « Աստուած զլիւսան պիտի խրկէ որ մեր հայրերուն սրտերն որդւոց վերայ հաստատէ » (3) ։

Ով Տէր, սրովհետեւ պէտք է որ սոյն խօսքը հաւատոյ մասին իմանա՞նք,

(1) Սոյն վկայութիւնը բան առ բան չկայ սուրբ գրոց մէջ տեղ մի. այլ միայն Եսայեաց 49. գլխոյն 8 և 9 համարներն ասոնց մտոց համաձայն են. « Եւ ասաց՝ Եթէ ժողովուրդ իմ են որդիքն իմ, և ոչ ահարգեցեն զիս. և եղև նոցա ի փրկութիւն յամենայն նեղութենէ նոցա ։ Ոչ պատգամուոր որ և ոչ հրեշտակ, այլ ինքնին Տէր փրկեաց զնոսա. վասն սիրելոյ, զնոսա և ինայելոյ ի նոսա ինքնին փրկեաց զնոսա. և վերացոյ և բարձրացոյ զամենայն աւուրս յաւիտենից » ։

(2) Ինձ հօրս լուսարար որդեակիք, և զոյս աբաղիք զի ապրեալիք ։ Չի Տէր փառաւորեաց ըզհայր ի վերայ որդւոց, և զիրաւունս հօր հաստատեաց յորդիս ։ ՍԻր. Գ. 1, 2 ։

(3) Եւ ահա ես առաքեմ՝ առ ձեզ զԵղիա թեզբացի, մինչև և կեպ է որ Տեառն մեծի և երեւելւոց. որ պատրաստեաց զփրստ հօր առ որդի Մաշ. Գ. 3, 6 ։

Թէ Աստուած որդւոց սրտերն՝ այսինքն Առաքելոց դէպ ի հայրերն կը դարձնէ, հիմայ այն որդիքն այսինքն առաքեալները մեզ հետ այս անվախ ճան դերութեան մէջ պիտի ըլլան, ինչպէս որ մեր հայրերն ու մեր անոր մէջ եմք ։ Բայց երբ Աստուած սահմանեց որ հայրերուն սրտերը պէտք է որ դէպ ի որդիքը դառնան, ի՞նչ է այն որս կը սպասեմք, Տէր խմ, և որս կը յուսամք ։ Թէ որ ուզեմք ըսել թէ Առաքեալները չէ, այլ ուրիշ մարդիկ պէտք է որ լինին որդիք ըսածը, սրտիք այլ ըլլան այն մարդիկը, անոնց պէտք է որ մեզ նման գերութեան մէջ ըլլան, սրովհետեւ այն Արդարոյն ճանապարհին Հետեւեցան. այլ Առաքեալները հետեւեցան նոյն Արդարոյն շաղագ հաստատուն կերպով, և ուսուցին թէ այլոց եւս պէտք է որ անոր հետեւին. և ասոր համար հօր պատիւ ունին, ինչպէս որ ըսուեցաւ թէ հայրերն դէպ անոնց դառնան ։

Ի յաջորդին ։

Ժ Մ Ա Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Ներկոյ ամսոյ 21 ին Յարպէէն մինչև Այրուսաղէմ շինուելիք ճանապարհին սկիզբն արուեցաւ հանդիսիւ ։ Նոյն օրը՝ հինգշաբթի առաւօտուն Վսեմ. Նաղի՛ֆ փաշայն անձամբ գնաց հոն հրաւիրելով թէ քաղաքի գլխաւոր աւագանիքը և թէ օտար տերութեանց հիւպատոսները, որոնք բաց ի Սուսայ հիւպատոսէն փութացին ներկայ գանաւիլ հանդիսին ։ Օմարայ Տաճարին առաջին ըւտարար մեծ շէխը նախ օրհնութիւն մի կարգաց հրատարակաւ, սրոյ լրանալուն Վսեմ. փաշայն կացինը ձեռքն առած առաջին հարուածը տուաւ, որս հետեւեցան միւս պաշտօնատարք, հիւպատոսք,